

5.27. 2011թ. մարտ ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության շրջակա բնական միջավայրը 2011թ. մարտին ունեցել է հետևյալ բնութագիրը.

5.27.1. Օդային ավազանի որակի մոնիթորինգ: Մարտին հանրապետության մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգ իրականացվել է Երևան, Արարատ, Ալավերդի, Վանաձոր, Գյումրի և Հրազդան քաղաքներում տեղակայված 13 մշտական լաբորատոր դիտակայանների, Երևան, Ալավերդի, Վանաձոր, Գյումրի, Հրազդան, Ծաղկաձոր, Վաղարշապատ, Աբովյան և Սևան քաղաքներում տեղակայված պասիվ նմուշառման 147 դիտակետերի, Երևան քաղաքում տեղակայված 4, Ալավերդի, Ծաղկաձոր քաղաքներում և Ամբերդ գյուղում տեղակայված 1-ական ավտոմատ կայանների միջոցով:

Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 52114 փորձանմուշ:

Մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգի անցկացման համար տեղակայված դիտակայանների, դիտակետերի, ավտոմատ կայանների և վերցված փորձանմուշների քանակական բաշխվածությունն ըստ քաղաքների և Ամբերդ գյուղի, 2011թ. մարտ

(միավոր)

	Դիտակայանների		Դիտակետերի		Ավտոմատ կայանների	
	քանակը	փորձանմուշների քանակը	քանակը	փորձանմուշների քանակը	քանակը	փորձանմուշների քանակը
ք.Երևան	5	462	17	89	4	37492
ք.Արարատ	1	25	-	-	-	-
ք.Ալավերդի	2	156	18	108	1	5749
ք.Վանաձոր	3	102	24	143	-	-
ք.Գյումրի	1	26	24	190	-	-
ք.Հրազդան	1	78	12	72	-	-
ք.Ծաղկաձոր	-	-	14	84	1	7016
ք.Վաղարշապատ	-	-	16	93	-	-
ք.Աբովյան	-	-	12	96	-	-
ք.Սևան	-	-	10	60	-	-
գ.Ամբերդ	-	-	-	-	1	73
Ընդամենը	13	849	147	935	7	50330

Երևան քաղաքի մշտական դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Փոշու և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները ՄԹԿ-ն գերազանցել են 1.7-ական անգամ: Քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ավտոմատ կայանների միջոցով որոշվել են ածխածնի մոնօքսիդի, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 21319, ծծմբի երկօքսիդի համար՝ 13069, ազոտի օքսիդների համար՝ 2238, գետնամերձ օզոնի համար՝ 866 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքերի տվյալների մթնոլորտային օդի փորձանմուշներում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.4 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.7 անգամ: Փետրվար ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.1 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Վանաձոր քաղաքի մշտական դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ակտիվ նմուշառման, ինչպես նաև պասիվ նմուշառման միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 4.0 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 5.6 անգամ: Փետրվար ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.4 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ալավերդի քաղաքի մշտական դիտակայաններում, ինչպես նաև ավտոմատ կայանում, ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 4973, ծծմբի երկօքսիդի համար՝ 668, ազոտի օքսիդների համար՝ 108 դիտարկում: Քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.4 անգամ: Փետրվար ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.3 անգամ:

Ծաղկաձոր քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 1805, ազոտի օքսիդների համար՝ 407, ծծմբի երկօքսիդի համար՝ 4804 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Վաղարշապատ, Աբովյան և Սևան քաղաքների պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ամբերդ գյուղում ավտոմատ եղանակով վերցվել է օդի 59 և փոշու 14 փորձանմուշ: Օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլորի, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 քիմիական տարրերի պարունակությունները: Ազոտի երկօքսիդի և ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ամբերդ գյուղի ավտոմատ կայանի հարակից տարածքի տեղումներում (անձրև) վերահսկվող նյութերի պարունակությունները, 2011թ. մարտ

(մգ/դմ³)

Նմուշների վերցման ամսաթիվը	Ցուցանիշներ					
	ջրածնային ցուցիչ (pH)	սուլֆատ իոն	քլորիդ իոն	նիտրատ իոն	ամոնիում իոն	տեսակարար էլեկտրահաղորդականություն (μՄմ/սմ)
22-23	6.12	1.25	1.28	0.33	0.620	15.2
24	6.12	1.25	0.26	1.02	0.820	13.5

5.27.2. Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ: Մարտին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 37 գետերի, Ախուրյանի ջրամբարի, Երևանյան և Սևանա լճերի 90 դիտակետերում: Վերցված 99 փորձանմուշներում որոշվել է 20-22-ական ցուցանիշ:

Մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը, 2011թ. մարտ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՄԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները			
			թփոս (ՄԹԿ՝ 3.0 մգ/դմ ³)	նիտրիտ իոն (ՄԹԿ՝ 0.024 մգN/դմ ³)	ամոնիում իոն (ՄԹԿ՝ 0.39 մգN/դմ ³)	սուլֆատ իոն (ՄԹԿ՝ 100.0 մգ/դմ ³)
Փամբակ	2	ք.Սպիտակից 0.5 կմ ներքև	5.0	-	-	-
	4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	4.7	0.028	2.841	-
Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	4.5	-	0.813	-
Չորագետ	10	Գետաբերան	3.5	-	0.540	-
Տաշիր	11	Միխայելովկա գյուղից 0.5 կմ վերև	-	-	0.494	-
	12	Մարատովկա գյուղից 0.5 կմ ներքև	4.2	0.028	1.017	-
Մարցիգետ	13	Գետաբերան	5.0	-	-	-
Ախթալա	14	Գետաբերան	-	-	-	146.7
Աղստև	15	ք.Դիլիջանից 1.2 կմ վերև	3.3	-	0.580	-
	16	ք.Դիլիջանից 0.5 կմ ներքև	-	0.042	1.500	-
	17	ք.Իջևանից 1 կմ վերև	3.8	-	0.580	-
	18	ՀՀ պետական սահմանի մոտ	-	0.029	1.432	-
Գետիկ	19	ք.Ճամբարակից 0.5 կմ վերև	-	-	1.830	-
	20	Գետաբերան	3.9	0.047	0.807	-
Արաքս	25	Սուրմալու գյուղի դիմաց	-	-	0.585	-
	29	ք.Ագարակից 2 կմ հարավ	-	-	-	169.6
	30	ք.Ագարակից 2.5 կմ հարավ-արևելք	-	-	-	171.0
Ախուրյան	31	Ամասիա գյուղից 0.5 կմ վերև	3.3	0.042	-	-
	34	ք.Գյումրիից 5 կմ ներքև	-	0.222	8.097	-
	35	Երվանդաշատ գյուղից 0.5 կմ ներքև	-	-	0.676	-
Կարկաչուն	38	Գետաբերան	-	0.299	2.341	172.0
Սևջուր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	3.4	0.073	0.938	254.7
	41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	-	0.090	0.807	242.2
	42	Ռանչպար գյուղից 0.5 կմ ներքև	3.5	0.074	0.665	199.8

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՄԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները			
			ԹԿՊ ₅ (ՄԹԿ՝ 3.0 մգ/դմ ³)	նիտրիտ իոն (ՄԹԿ՝ 0.024 մգN/դմ ³)	ամոնիում իոն (ՄԹԿ՝ 0.39 մգN/դմ ³)	սուլֆատ իոն (ՄԹԿ՝ 100.0 մգ/դմ ³)
Քասախ	44	ք.Ապարանից 0.5 կմ ներքև	6.5	-	4.460	-
	45	ք.Աշտարակից 1 կմ վերև	4.0	-	-	-
	46	ք.Աշտարակից 3.5 կմ ներքև	4.5	-	-	-
	47	Գետաբերան	4.1	-	-	-
Հրազդան	52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	4.0	-	0.943	-
	53	Արգել գյուղից 0.5 կմ ներքև	3.4	-	-	-
	54	Արգնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև	3.7	0.059	0.926	-
	55	Դարբնիկ գյուղի մոտ	6.3	0.136	11.648	-
	56	Գետաբերան	4.0	0.079	5.199	119.8
Մարմարիկ	58	Գետաբերան	4.9	-	-	-
Գետառ	59	Գետաբերան	5.0	0.138	7.330	-
Մարտունի	72	Գետաբերան	-	-	0.438	-
Ծակքար	75	Գետաբերան	3.5	-	0.420	-
Արփա	84	ք.Վայքից 0.5 կմ վերև	3.5	-	-	-
Ողջի	92	ք.Քաջարանից 1.8 կմ ներքև	4.2	0.038	6.392	153.1
	94	ք.Կապանից 6.8 կմ ներքև	4.1	0.049	1.852	268.3
Գեղի	98	Գետաբերան	-	-	0.472	-
Որոտան	101	ք.Սիսիանից 1 կմ ներքև	-	-	0.426	-
	102	Տաթև ՀԷԿ գյուղից 0.5 կմ ներքև	-	-	0.443	-
Գորիսգետ	107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	-	0.122	6.818	-
Ախուրյանի ջրամբար	110	Ամբարտակի մոտ	-	0.029	1.261	-
Երևանյան լիճ	112	Ամբարտակի մոտ	3.8	0.056	1.352	-
Սևանա լիճ	116	Թերակղզուց 70 ⁰ ազիմուտով	4.4	-	-	-
	117	Ձկնագետի գետաբերանի շրջանում՝ 20 մ խորքից	3.6	-	-	-
	118	Շորժա գյուղից 0.5 կմ հարավ-արևմուտք	3.4	-	-	-
	119	Շորժա գյուղից 6 կմ հարավ-արևմուտք				
		մակերևույթից 20 մ խորքից	4.6	-	-	-
	121	Փամբակ գյուղից 10 կմ 270 ⁰ ազիմուտով				
		մակերևույթից 20 մ խորքից	3.8	-	-	-
	122	Փամբակ գյուղից 2.2 կմ 255 ⁰ ազիմուտով, մակերևույթից	3.9	-	-	-
	123	Փամբակ գյուղից 13 կմ 235 ⁰ ազիմուտով՝ 20 մ խորքից	3.7	-	-	-
	124	Մասրիկ գետի գետաբերանի շրջանում	3.9	-	-	-
	125	Կարճաղբյուր գետի գետաբերանի շրջանում	4.3	-	-	-
	126	Կարճաղբյուր գետի գետաբերանի շրջանում	3.9	-	-	-
	127	Արփա-Սևան ջրատարի ելքի մոտ	3.5	-	-	-
	128	Մարտունի գետի գետաբերանի շրջանում	4.6	-	-	-
	128	Երանոս գյուղից 15 կմ 90 ⁰ ազիմուտով				
		մակերևույթից 20 մ խորքից	4.1	-	-	-
	129	Երանոս գյուղից 24 կմ 90 ⁰ ազիմուտով՝ 20 մ խորքից	3.4	-	-	-
130	Նորաղուս գյուղից 7 կմ հյուսիս-արևմուտք	3.7	-	-	-	
131	Չկալովկա գյուղից 7.5 կմ հյուսիս, մակերևույթից	3.4	-	-	-	
		Չկալովկա գյուղից 7.5 կմ հյուսիս, մակերևույթից	4.3	-	-	-